


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 Մհն.
Պարսկաստանի համար 2 լիւր
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 Մհն.
Պարսկաստանի համար 1 լիւր
Օտար երկիրներու համար 50 Մհն.
Շահուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ 5- աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կը-
լայ :
Խորաքանչիւր թիւ 40 փորտ պղինձ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆՍԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս ցնայած լրագրաց հանրու
ծախքը Խորագրութեան վրայ է :
Լրագրաց փութերեւոյ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագրի
— ճնորդին պիտի ուղարկուի : Գրա-
թիւն Վանարքայի համար թիւ
198, Եօրթ խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չիճարուած նա-
մակ չընդունուիր :
Չարքանձ նամակ, յոգում, և
կա չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 16 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երկրպագան խնդիրն եւրոպայի
մէջ ուշադրութեան առարկայ եղած
է միշտ : Բայց անմիջական լուծում
մը կամ տէրութեանց կողմէն գործո-
ղութիւն մը յուսարի չէ : Խառն խիստ
փարպետ կերպիւ շարժեցաւ և իւր
ընթացքն ազգային կամայ համաձայ-
նելու պարտաւորութիւն մը ցոյց աը-
ւաւ : Թէպէտ ամեն մարդ զիտէ որ
Արեւելեան երկիրներու մէջ վեհա-
պետներէն անկախ ազգային կամք չը
կայ : Թողոյ լրագրիւր կըսէ թէ քանի
որ Խորին իւր պարտքերն ամբողջ
վճարել չանձն կանան, պէտք է թո-
ղու որ այնպէս ընէ՝ մինչև որ ինք
ևս հասնի թէ ո՛րչափ անդործա-
դրելի բանի մը ձեռնարկած է : Խը-
տիկին եւրոպական ազգեցութեան
դէմ ազգային կամքն իրեն գործիք
ընեն եւրոպայի մէջ ուրիշ տըպաւո-
րութիւն մը կընէ նաև, այն է թէ
խառնութիւնը չուզի բնաւ եւրո-
պայի պահանջած բարենորոգումներն
ի գործ դնել, և այս մասին ոչ միայն
Դադղիւր՝ այլ և Անգղիոյ մէջ պատ-
րանաց զգացումը մեծ է : Բոլոր այն
պետական մարդիկ և լրագրիւր՝ որք
կը կարծէին թէ եւրոպայի խորհրդով
Արեւելը կընար վերածնիլ, հիմայ կը
տեսնեն և կը խառնութեան թէ ո՛ր-
չափ պատիր են եղեր իրենց յոյսերը :
Թողոյ, որ Անգղիոյ նախարարութեան
բերանն է, կըսէ թէ “Երկրպագան
գործերը՝ Մահմետական խորհրդակա-
ն եւրոպայի վերակենդանացներու և
Նուրպահան ազգեցութեան սաստ-
կապէս դիմադրելու որոշում մը կը
ցուցնեն, այս պատճառաւ փաստակար
օրինակ մը կընան տալ նաև Դ. Պո-
լիս, միանգամայն մեծ դժուարութե-
ան մը կը հանեն մեր Արեւելեան
ճրագրաց և յոյսերուն դէմ : Ոչ միայն
խիստանաց բացարձակ կամահաճու-
թեան յաղթելու պիտի պարտաւո-
րիմք, այլ և խառնութեան աւան-
դական յամաւորութեան, ուստի և ա-
մեն աւանակ արգելք պիտի տեսնեմք
անդադար մեր ճանապարհին վրայ :”
Եւրոպական լրագրաց այս խորհրդա-
ծութիւնները ծանր են, քանզի եւ-
րոպայի և խառն աշխարհին մէջ եղած
յարաբերութեանց ցրտութիւն կընը-
շանակեն, որոյ հետեւեալը մեծապէս
փաստակար կընայ ինչի քաղաքակրթ-
ութեան համար : Առ այժմ՝ Առա-
քաղիւրը միայն կուրախանան այս նը-
շաններուն վրայ : Անգղիոյ և Գաղ-
ղիայի Թուրքաստաններուն կարծեաց
և յուսոյց այսպէս ոչնչանալը մեծ դո-
հութիւն կը պատճառէ անմիջ. Եւ-
րոպիոյն յայտնի խնդու թեմք մը

յառաջ կը բերէ այն խորհրդածու-
թիւններն որք Թուրքաստանը սխալն
ու հակասութիւնը կը հաստատեն :
Բայց եւրոպական համակրութիւնը բո-
լորովին կորուսանելու վտանգը խիստ
փաստակար է Թուրքիոյ և Երկրպագան
սի շահերուն : Հարկաւ Բ. Գուրու և
Խորին այս վտանգը տեսնելով կը փու-
թան ըստ կարելոյն դոհ ընել եւրո-
պական զգացումը : Դեռ եւրոպա մեծ
չափաւորութեամբ կը շարժի, և կըս-
ւէր թէ Արեւմտեան մեծ տէրութիւնը
պիտի թողուն որ Խորին իւր յանձնա-
ւած նոր պարտականութիւնները կա-
տարէ, մանաւանդ որ Պ. Վիլսոն և Պ.
Պիկիէր իրեն երկրպագան պաշտօնա-
տար Խորինին ծառայութեան մտած-
ըլլալով, իրենց պաշտօնականութիւնն
ուղղակի թշնամանք չէր համարու-
թէ Անգղիոյ և Գաղղիոյ ընդհանուր
հիւպատոսներն յատուկ ծանուցադ-
րով մը պահանջած և ընդունած չի-
նէին, որ եւրոպացի նախարարք խոր-
հրդին մէջ առաւելագոյն քուէ ու-
նենան : Բայց ինչպէս արդէն ասիկէ
առաջ հաստատած էինք թուանշան-
ներ ցոյց տալով, կարելի է որ երկու-
սուս առ այժմ իւր պարտքերն անթերի
վճարէ, հոսակ ուրեմն վճարումներն
ամբողջ կամ մասամբ դադարեցնե-
լու օրը պիտի գայ : Եւրոպական տագ-
նաւն յետաձգուած է, բայց ոչ ան-
հետացած : Այն ատեն նայինք Անգ-
ղիա և Գաղղիա ինչ պիտի ընեն :
Ստոյգ է որ կըսեն թէ ինքիւր կըտ-
րօնի և տոկոսի խնդիր չէ, և թէ ան-
արժան է երկու մեծ տէրութեանց
ստակի համար միջամտել : Այսու ամե-
նայեւ եւրոպական լրագրիւր կը յայ-
տարարեն թէ երբ երկիր մը չկրնար
իւր պարտքը վճարել, երբ իւր երկը-
տակին և անտեսական վիճակը կը
վատթաւանայ, անհնար է որ անբա-
րեկարգ և անխիստանական վիճակի
մէջ չկենայ, ինչպէս են Հարաւային
Ամերիկայի Հանրապետութեանց մէկ
մասն, որք բնաւ քաղաքական հա-
մարում չունին : Պարտքերը չվճարող
երկիր մը պարտքերը չվճարող անհա-
տէ մը տարբերութիւն չունի, և երբ
երկիր մը այս վիճակին մէջ կընայ,
ինչպէս կընայ բարեկարգիւ : Բայց
եւրոպա կըսէ թէ իւր շահուց կը
դպչի երկրպագան ու իրենց անբա-
րեկարգ վիճակի մէջ թողու :

Եւրոպացի ըրած ո՛ր և է առաջար-
թեան նկատմամբ :
Անգղիոյ երկամեջ նախարարին
այս խօսքերէն կը հասկցուի թէ Սուլ-
թանին խառն պաշտօնանկ ընելու
առաջարկութեան լուրը բոլորովին
անհիմն չէ եղեր : Երբ Սլաւոֆորտ Նորթ-
քոթ պիտի փութար բացարձակապէս
վճարողական պատասխան մը տալ ե-
րբ չհարցմանց :
Կը տեսնուի ահա որ ապագայն
միջութեամբ պատետէ, և այս բո-
լոր նշանները քաղաքական հորիզ-
նին ի մտոյ պարզութիւն գտնելու
յոյս չեն տար : Գաւալի է որ այս ան-
կերպարան պարագայից մէջ զլիա-
ւորապէս ներդուրներն ու փաստադ-
ներն Արեւելեան ժողովուրդներն են,
որոյ վիճակին բարեւորման անուամբ
գիւտապահներն աշխարհ մերան ըս-
պաւեցին :
Արեւելեան իւրմէլի կազմաւո-
րութեան զբաղող եւրոպական յանձ-
նախմբին վերջնութեւր նախն մէջ վա-
ղըքներու խնդրոյն վրայ համաձայ-
նութիւն գոյացած լինելով, ինչեալ
յանձնախումբը շարաւթ օրը կէս օրէն
եաքը նիստ մը բաւ և Արեւելեան իւ-
մէլի կազմական կանոնադրին ստո-
րագրեց : Գանձնախումբը տակաւին
կարգադրելի երկու երեք մանր խն-
դիրներ և մեծ խնդիր մ'ունի իւր
առջև, այն է 24 միլիոն ֆրանքի հա-
տուցումը՝ զոր Ռուսիա կը պահանջէ
գրաւման և առժամանակեայ վար-
չութեան ծախսոց համար :
Ասիկց դատ, յանձնախումբը Պէր-
լինի դաշնագրին 23րդ յօդուածին
գործադրութեան եղանակին վրայ
ալ պիտի խորհի, որ, ինչպէս կը յի-
շեն ընթացողք, Կիլիկիա արուած
կանոնադրութեան ձեւով բարենորո-
գու մներ կը տրամադրէ եւրոպական
Թուրքիոյ այն գաւառացի համար, ու
րոյ նկատմամբ Պէրլինի դաշնագրին
յատուկ անօրէնութիւն մը ըրած չէ :
Բեղդարպուրկէն լուր կուտան թէ
յատուկ յանձնախումբ կազմուել է
հետզհետէ տեղի ունեցած դաւա-
ղըրութեանց դէմ ձեռք առնուելիք
միջոցներուն վրայ խորհելու համար :
Քննութեան առարկայ եղած միջոց-
ներուն կարգէն է նաև Ռուսիոյ մէջ
տասներկու ընդհանուր կառավար-
չութիւններ հաստատելու առաջար-
կութիւնը :
Չորս ուսուր միջոցի մէջ տէրու-
թեան բարձր պաշտօնատարաց դէմ
հինգ անգամ դաւաճանութեան վոր-
ձեր եղան ի քիէվ : Արքանիկէի ու-
տիկանապետն սպաննուեցաւ, և գի-
տկին վրայ թուղթ մը գտնուեցաւ
ծանուցանող թէ “Ռուսիոյ յեղափո-
խական մասնախմբին հրամանաւ ըս-
պաննուած է :”

Չարին մէկ հրամանագրովը Լի-
ւիս Մէլեքօֆ զօրավարը խաբարովի
կուրքօ զօրավարը Բեղդարպուրի և
Թոթլէպէն զօրավարն Օտէսայի տու-
ծամանակեայ ընդհանուր կառավա-
րիչ անուանեցան :
Վիեննայի Թախագրի լրագրին
պարի 12 թուոյն մէջ կը ծանուցանէ
թէ Միլան իշխանը քանի մ'օր առաջ
մեծ վտանգ մ'անցուցեր է Նիշի մէջ :
Իշխանն ինչեալ քաղաքին մէջ ինչեա-
պահի մը հետ իւր ստորական շրջա-
կայութիւնն ըրած ծամանակ իւր ե-
տեւր մեծ պայթում մը տեղի ունե-
ցեր է, և շուրջի ու ծուխի ամպ մը
որոյ կտորներէն մին թիկնապահը
վիրաւորեր է, բայց իշխանը չէ փնա-
ուեր : Կ'ըսուի թէ ուսմը քանի մը
վայրկեան առաջ հոն դուրած և վը-
րան հոգով ծածկուած էր, բայց տա-
կաւին չէ կոյած հաստատուել թէ
իշխանն սպաննուելու նպատակաւ էր :
Թերեւս ասոր համար է, որ անցեալ
շաբթու եկած հեռագիր մը ծանու-
ցած էր թէ Միլան իշխանին դէմ դա-
ւադրութիւն մը նիւթուած լինելուն
լուրն անհիմն է :
Վիեննային եկած հեռագիր մը կը
ծանուցանէ թէ Դուվալօֆ կամեն որ
վիեննա դնացած էր, ուրաւ օրն
Անտրաշի կամին հետ տեսակցութիւն
մ'ունեցեր է :
Քուուիէ մ'Օրիան լրագրիւր Զըր-
նուրի վանահայր Գեոր. Նիկողոս ե-
պիսկոպոսին և անոր ընկեր Չօլաք-
եան Գարութիւն վարժապետին ու-
տիկանութեան գտնէն ուղղութեան վը-
րայ խօսելով՝ հետեւեալ իրաւացի
գիտարկութիւնները կընէ, որք ամեն
Հայու դահուսկութեան արժանի են :
“Գայտի է թէ Նիկողոս եպիս-
կոպոս քանի մ'օր առաջ աղերսագիր
մը մատուցեր էր Մեծ-Եպարքոսին,
որով հրաման կը ինդրէր իւր երկի-
րն երթալու որպէս զի կայսերական
տեսուչներուն առջև ինքիւր ար-
դարացին իւր և ընկերին վրայ եղած
ամբաստանութիւններէն :
“Չմը գիտեր թէ կառավարու-
թիւնն ինչ պատճառներէ մղուելով
Հայ եպիսկոպոսին խնդիրը մերժած
է : մեզ կը թուի թէ՝ ըստ արդարու-
թեան պէտք էր թող տալ այդ եկե-
ղեցականին որ վերջերս Զէյթունի
մէջ ծագած խառնութեանց իւր դըր-
դընի զինքը ներկայացնող տեղեկագ-
րութեանց ստույթները հաստատէ : Մը-
նաց որ՝ եպիսկոպոսին աղերսագիրն
ըստ բաւականին կը հաստատէ թէ
Նիկողոս եպիսկոպոս իւր անմեղու-
թիւնը հաստատելու և իւր թշնամի-
ներն ամօթաւոր ընելու վիճակի մէջ է :
“Ասիկց դատ, կայսերական տե-
”

տուհներն, որոց հարկէս հասնելը կը ծա-
նայուի, անշուշտ քննութիւն պիտի
բանան Զէյթունի խառնութեանց վը-
րոյ, որով ճշմարտութիւնը պիտի կըր-
նայ երևան գալ: Մինչև այն ժամա-
նակ՝ արդարութիւնը կը պահանջէ
որ Նիկողոս եպիսկոպոսը և իւր ընկերն
կըրն չարագործ չնկատուին:

«Խօսակցելը Ահմէտ փաշայի և Պէ-
տէրեան փաշայի որդւոց նկատմամբ
ի դորձ դրուած զթուծիւնը կը նե-
րէ յաւաք թէ քիչ մ'անկեամբութիւն
ցոյց կը արուի եկեղեցականի մը, ո-
րոյ յանցաւորութիւնը տակաւին դա-
տաստանաւ հաստատուելէ:»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Բեղրադուրի 28 ապրիլ.
Յուսկոյ կառավարութիւնը կը հաւանի
որ ի հարկին Օսմանեան զօրքն Արեւե-
կան Բուսիլի կանչուելու համար Ներ-
սական յանձնարարութիւն ոչ թէ միաձայ-
նութեամբ այլ մեծ ամառնութեամբ որո-
շում տայ:

Փարիզ 28 ապրիլ.
Գաղղիոյ և Անգղիոյ կառավարու-
թիւնը երկէ ծանուցաւր մը զրկեցին
Եգիպտոսի խառնի՝ յայտարարելով թէ
Խառնը կը պարտի Գաղղիացի և Անգլի-
ացի նախարարներ անուանել, և առանց
Գաղղիոյ և Անգղիոյ կառավարութեանց
հաւանութեան զանոնք պաշտօնակն չընել:
Եթէ Խառնը այս պայմանները չընդունի,
բանական միջոցներ ի դորձ պիտի դըր-
նին իրեն դէմ:

Բեղրադուրի 28 ապրիլ.
Բեղրադուրի գերատեսչական կառավա-
րին հրամանաւր մը հրատարակելով
պատահելէ որ թէ՛ գերատեսչական և թէ՛
քաղաքային սակն անհատք իրենց ձեռք
գտնուած վերքերուն տեսակն ու հախը
կառավարութեան իմացնեն:

Զարին դէմ նոր դաւաճանութիւն մը
փորձուած լինելուն լուրը սուտ է:

Փարիզ 28 ապրիլ.
Պ. Վատինկի՞նս այսօր միայն զրկեց
Յունաստանի վերաբերեալ չընթերցականը:
Թան լրագիրը կը կարծէ թէ նոր բա-
նակցութիւնը այս խնդրոյն չուտով լուծ-
ման յոյս կուտայ:

Այս անգոր հաս-ձ հե-ձքէր:

Վիեննա 27 ապրիլ.
Կայսեր և կայսրուհոյն ամուսնու-
թեան 25րդ տարեդարձին ի պատիւ՝ Վի-
եննայի հասարակութեան կարգադրած
հանդիսաւոր թաղարն այսօր տեղի ունե-
ցաւ հիմնադրին համեմատ: Բաղմութիւ-
նը խիստ մեծ էր, կայսեր և կայսրուհ-
այն համար եռանդաւոր կեցեցներ ար-
ձակուեցան: Կայսրն այս համահարկան
մեծ ցոյցերուն համար իւր բարձր գոհու-
նակութիւնն յայտնեց թաղապետին:

Գաւհրէ 27 ապրիլ.

Եգիպտական նախարդ նախարարու-
թեան մէջ երկրագործութեան և հասա-
րակաց շինութեան նախարար Գաղղիացի
Պ. Տը Պիլիէր Նիկողոս մնալու հրաման
ստացաւ իւր կառավարութեան:

Պարս պէյ փաշայութեան աստիճան
ստացաւ և Խառնի մասնաւոր խորհրդ-
դին նախագահ անուանեցաւ:

Փարիզ 27 ապրիլ. Փոքր Պորսա
Օսմ. Գոնաթիւնէ 11:40

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Թագւոր Եփէմովն գաւառական նա-
խարարութեան մէջ կազմուած իրա-
ւարական (Ռեմուրը հօւղուղի)՝
ճիւղին անօրէն անուանեցաւ:

Յովհաննէս պէյ Կ. Պոլսոյ վերա-
քըննիչ ատենին ընդհանուր դա-
տախաղի օգնական անուանեցաւ:

Յունաստանի Օրիա թագուհին,
որ Ռուսիոյ կայսեր եղբայր կոստան-
դին Մեծ-Դուքսին դուստրն է, Ա-
թէնքէն Լիվադէա կերթայ Զարին

ուրախակցութիւն յայտնելու, և
կատարուելոյն հետ ալ տեսակցելու
նպատակաւ:

Յիշեալ թագուհին ամառը Հելլե-
նական շողեւան երէկ առ առ փա-
փորէն անցաւ:

Մէլանիլէն ամառած լուրեր կը
ծանուցանեն թէ Մակեդոնիոյ ներ-
սերը Պալլաքար վերադարձնող երեք
են և Մեկանիլէն փութով Օսմանեան
զօրք զրկուելէ անոնց դէմ:

Յունաստանի սահմանագլխոյ ուղ-
ղութեան համար Օսմանեան երկրորդ-
պատուիրակ կոստանդ փաշան և
յանձնախմբին կցորդ ուրիշ Օսման-
եան պաշտօնատարք ուրբաթ օրը
մայրաքաղաքս հասան:

Շարաթ օրը չարափաշ զօրք զըր-
կուեցաւ Քոսովայի նահանգը: Եր-
կու փաշա զօրք և նոր աստիճանու-
թեանէն քանի մը գումարտակ ալ Ադ-
րեանուպօլսոյ նահանգը զրկուեցան:

Երէկ Բ. Դուքս քանի մը հարիւր
զաղթականաց 20ական զրուհոց թըր-
թագրամ բաշխուեցաւ:

Ռարաթ իրիկուն կամուրջն ելնող
Խառնուարի վերջին շողեւանին (թիւ
6) մէջ՝ բաղմութեան պատճառաւ
երկու Հայ պատանիք նաւապետին
քովի Մէլքի կեննելու երբ Մէլքի
զինը կը պահանջուի, կը պատասխա-
նեն թէ չեն կրնար վճարել: այս
պատճառաւ բանակաւ մը ծագի, և
նաւապետը Մէլքի հետ զարուստն՝ պա-
տանիները կը լծնամանէ, և շողեւա-
ւը կեննել կուզէ, բայց ճանապարհ-
հորդը կ'ստիպեն զինք նաւամտոյն
երթալու: Հան արգէն սուխաւոր
զինուորներ կեցած էին, Շիրքէթին
կողմէն կոչուած, որպէս զի ճանա-
պարհորդաց բողոքին առաջն առնուն:

Բայց հաջիւ թէ ճանապարհորդը
Խառնուարի նաւամտոյն ելան,
մարտաւոր փետրիկներէն Հիւսէ-
յին Հիւսիս Եփէմովն անուն զինով մը
զորականներուն կը դուռ թէ «Կեա-
վորներն ապստամբած էին շողե-
ւանուն մէջ»: Ասոր վրայ հարիւրա-
պետին հրամանաւ զօրականք սուխ-
ի ձեռքին ժողովուրդին վրայ կը յար-
ձակին: Տասնի չափ մարդիկ կը վի-
րաւորուին, և քան և հինգ հոգիի
չափ ալ ձերբակալուելով պահակա-
նոցը կը տարուին: Այն տեղի հար-
իւրապետն ևս ժողովուրդը կը լծը-
նամանէ ընթելով: «Կեալուրներ, դուք
յեղափոխական մասնախորհուրդ կաղ-
մած էք, Մէլքիի դէպքը պիտի վի-
րանորոշէք եւ:»

Ձերբակալեալները մինչև Խառնու-
արի կառավարութեան պաշտօնա-
տունը կը տարուին: սակայն Մ. Խա-
չի թաղական խորհուրդն եկեղեցւոյն
քարոզիչ Գեր. ճեքմանեան վարդա-
պետը կառավարութեան պաշտօնա-
տունը զրկեց և անոր միջնորդու-
թեամբ ժամն Յին միջոյնը ձերբա-
կալեալներն ազատեցան:

Այս դէպքին համար երէկուան
կիրակի օրը կառավարութեան կող-
մէն երկու քանիք զրկուած էին Ս.
Խաչի թաղ. Խորհուրդարանը: Այս եր-
կու պաշտօնատարք ժողովրդեան
գանդատները մտիկ ըրին, և թաղ.
Խորհուրդն ալ բողոք մը ներկայա-
ցուց անոնց՝ վերջիշեալ շողեւանին
նաւապետ Մէլքիէն Գարթմանի, ժո-
ղովրդեան վրայ յարձակող Տիւմէնի
Խառնի, հայհոյանք ընող և զինուոր-
ները դրդող Հիւսէյին Հիւսիս Ե-
փէմովն, զինուորներուն սուխով
յարձակման հրաման տուող հարիւ-
րապետին, և վերջապէս պահակա-

նոցի հարիւրապետին դէմ, դատա-
տան և արդարութիւն պահանջելով:

Թան լրագրոյն Կ. Պոլսոյ թղթա-
կիցը մայրաքաղաքիս Ֆար Տիւ. Պոս-
ֆոր լրագրին նամակ մը գրելով՝ կը-
սէ թէ Բ. Դրան պաշտօնակն տողին
մէջ յայտարարուածին համեմատ,
կաթիլիկ Հայոց խնդրոյն նկատմամբ
Բ. Դրան կողմնէն դեռ պահանջ չըջա-
բերական զրկուած չէ, բայց թէ
այն չըջաբերականը կայ ու կը կենայ
թէ ինք (թղթակիցն) անոր պատճէնն
ունի, և թէ Բ. Դուքսը զայն իւր
գեղապանաց ուղղելու համար խմբագ-
րած էր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԷՍԶԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ			
Այս ամառոտ բացուեցաւ	42.12		
Կէս օրին	12.11		
Բաւարի երկրորդի	Քր. 42		
Թղթագրամ	100		
ԸՆԹԱՅԳ ԳՐԱՄՈՅ			
16 Ապրիլ			
Անգլ. լիւր	դր.	109	30
Նարոյի անկի		87	30
Խիւսիսի լիւր		89	27
Գլխովի		51	12
Մէլքիի տարբերութիւն		6	20
Հիւսիսայ		11	20
Պրիւս		143	20

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ

Կը լսենք թէ Անգղիոյ դեռ պա-
տան առաջին քարտուղար Սըր Ա.
Սանտիլըն շարաթ օրը նամակ մը
գրեց Ե. Ս. Պատրիարք Հօր՝ ծանու-
ցանելով թէ Բ. Դուքսն յանձնարու-
րած է Անգլիական գեղապետան
խմբակը Հայոց Պատրիարքարանին
թէ Կ. Պոլսի գաղութային Ֆրանսի-
նահայրն և իւր ընկերքը աղատ են
Մարաշ երթալ, և հոն կայսերական
տեսչաց կազմած յանձնախմբին ներ-
կայանել իրենց վիսյութիւններն ու
տեղեկութիւնները:

Արարատեան աղբանուէր ընկե-
րութիւնն իւր հաստատութեան եր-
րորդ տարեկան շրջանն աւարտելուն
ստիճիւ փառաւոր կոչուել մը ար-
ւաւ երէկ Ղալաթիա Բարութիւն
Դատարանին օթեանին դահլիճի մէջ,
ուր հրաւիրեալ էին Գաղղիացի խմբ-
Արեւելեան և Կիլիկիան ընկերութեանց
անօրէն խորհուրդներն, Աղդ. ժողո-
վոյ ատենապետ Վահմ. Ստեփան փա-
շա Ստանեան, Մեծ. Տիգրան Եփէմովն
Խառնուար, Հայ և օտարազգի խմբ-
բաղբայրք, Գաղղիական թան լը-
րագրոյ թղթակից Պ. Տոմանթէ, Տէ-
պայի թղթակից Պ. Շրիպիլէ, և Կո-
լակի թղթակից Պ. Մասն. հայտնէր
և աղտուամիտ գաղղիացիները:

Ճաշին աւարտման մօտ, վահմ.
Ստեփան փաշան որ սեղանին կը նա-
խագահէր, հետեւեալ բաժակն առա-
ջարկեց:

«Արարատեան ընկերութիւնը յու-
ստու է աղբին, և հանդիսն Արա-
րատեան աղբանոցն դատարարակու-
թեան դատարգապիսեայ պատի ի ձե-
ռին վերականգնութիւն կուտէ
մեզ՝ երկինք հաշտ և երկիրս պատ-
րաստ գանդելով Դատարարակութիւ-
նը հիմն է աղբաց վերանորոգման,
և միւս թարական է մեզ տեսնել որ
Արարատեան երիտասարդութիւնը
կատարելութեան խառնուարուն ըն-
թացքով դատարարակութիւնն ընտ-
րած է աստարեղ իր փութիւն փա-
տակոց և անոր տարերքը կը սերմա-
նէ հայրենեայ արդաւանք հօգեւրուն
մէջ: Արդիւնաւորութիւն մաղթենք
նմա և տեսութիւն ցորչափ իւր հա-
մանուն իրաւն կայ և մնայ կանգուն
յաշխարհի:

«Բայց ըստ որո՞ւ մ'աղբային վերա-
կենդ անտ թիւնն նկատմամբ ամեն

Հայու աղբ դէպ այն վեհապետը կը
յառնին, որ առաջինն եղաւ ի շարս
Սուլթանաց մեր աղբին համար ի
մասնաւոր ապահովութիւնք և բար-
ւոյ մեռնք խոստացող և ստորագրող,
և առաջին պիտի ըլլայ անշուշտ դա-
նանք իրականացնելու հոգ ամառոյ,
մեր առաջին բաժակն ալ իրաւամբ
անոր կը վերընծայենք: Բաժակ ու-
րեմն ի կենդանութիւն մեր Օյոտու-
փառ Կայսեր Սուլթան Ստանուլ Հա-
միտ Խանին Օսմանեանց:»

Համայն կոչեալները ոտքի վրայ
եկելով կեցցէ՛ վեհ. Սուլթան Հա-
միտ Գոյեցին և բաժակները պար-
պեցին:

Ամբիւսպէս յետոյ Երեսօֆեան
Տիգրան Եփէմովն համառօտ բանա-
խօսութիւն մ'ընելով Ս. Պատրիարք
Հօր կենացը բաժակ առաջարկեց:

Այնուհետեւ հետզհետէ բաժակ
առաջարկուեցաւ ի կենդանութիւն
վերջիշեալ Գաղղիացի հիւրոց, որք
մեր աղբին նկատմամբ խիստ համակ-
րական զգացումներ արտայայտեցին.
նմանապէս ի կենդանութիւն Հայ
լրագրապետաց, որոց կողմնէն լը-
րագրոյս Խմբագիր-Տնօրէնը շնոր-
հակալութեամբ պատասխանեց:

Նմանապէս բաժակներ առաջար-
կեցան Արարատեան ընկերութեան
համար, Գաղղիացիացի և Կիլիկիան
ընկերութեանց համար, Հայ երիտա-
սարդութեան համար, եւ եւ:

Արարատեան ընկերութեան Տը-
նօրէն խորհրդոյ ատենապետ Մեծ.
Գաբրիէլ Եփէմովն Նորաստանիւն ալ
հետեւեալ ուղերձը կարդաց:

«Տնարք հանդիսականք:

«Լուսաւորեալ դարու մէջ կապ-
րեմք: Կը տեսնեմք, կ'զգամք, կը
գնահատեմք ըստ կարի այն արամա-
դրութիւնները, բարք և դադարաւոր-
ներն որք ի լըս կուգան դիտութեանց
և արուեստից բարդութեամբ ի հին
և ի նոր աշխարհս: Ամեն օր լըա-
ղիք և հանդէսը ձայն կուտան
հանճարաւոր մտաց նորանոր և հրա-
շալի գիւտերու, որովք բանական
աշխարհի ներկայն ու ապագայն ան-
դորի, դիւրանայ և բարեբաւստ
լինի:

Այս ընդհանուր ու երջանիկ
շարժման մէջ՝ աշխատութիւնը նուի-
րական պարտք մ'եղած է ամեն աղ-
բաց ու ժողովրդոց ժամանակն ան-
դին և ուսումն ու գիտութիւնն ան-
հրաժեշտ: Բարեբաղդ կը համարուին
և են այն աղբեր՝ որ քաղաքակիրթ
ու լուսամիտ աղբաց ընթացից բա-
րենախանձ գտնուելով, ըստ այնմ՝
կողբեն իրենց ընթացքը դէպ ի յա-
ռաւադիմութիւն և ի զարգացումն
Այսպիսիք և թէ ոչ ներկային՝ դէթ
յապագային պիտի վայելին անշուշտ
իրենց նախնեան սրտ թեան ու ջանից
արդիւնքը:

Թեպէտ Եւրոպիոյ մէկ եղբը կը
գտնուիւք և մայրաքաղաքի մէջ,
բայց զորիկ այս ամենէն, զի կողմը
թէ ունեցածնիւ աննշան է. չե՞մք
հարցնել միմե երբէք թէ ո՞ր եմք և
ինչ որ՞մա՞ կը ժամանակին պա-
հանմանց պատասխանելու արժանի
և երբ իմաստասիրեմք ու զգամք
թէ մի վայրկեան կորուստ մահ է աղ-
բաց համար, և երբ զայս խի բաղ-
դատեմք մեր հայրենեայ վիճակին
հետ՝ ուր կը պակսին քաղաքակրթ-
ութիւնն անհատ արարքն, ո՞ր
ստիճանն ցաւալի և խոր ապագորու-
թիւն չեմք զգար մեր սրտերու մէջ:

Չայտնիկ աչաց առաջն ունենա-
լով՝ ահա՛ հինգ աղնուախոհ երիտա-
սարդք կը ժողովուրն երբք տարի ա-
ռաջ 1876 ապրիլ 13ին ի Միջագիւղ՝
իրենցմէ միոյն տան մէջ, և միախոյ-

Հուրդ կը հիմնեն Արարատեան ընկերութիւնը ու նպատակ կընտրեն Հայաստանի մէջ առում ծառայել :

Արդարեւ այսպիսի յանդուգն ձեռնարկ մը 'ի գլուխ հանելու համար թէպէտ չունին դեռ միջոց , սակայն յայտ ունին Ազգէն և գիտեն թէ առաջին քայլն է ամեն գործոց մէջ առաւել թանկագինն ու դժարը :

Յարատեւ գործունէութիւն և անվերջատեւ աշխատութիւն կը պատկեն իրենց ջանքերը , և այսօր որ ներկայ են այս տարեգրաբնի հանդէսին՝ որ առաջին անգամ տեղի կունենայ հիմնադրութենէն 'ի վեր , իրաւունք ունին բարեբաղդ համարելու զիրենք՝ իրենց անկեղծութենէն անդր քան զառաւել տեսնելով ընկերութեան զարգացեալ վիճակը :

Ի սկզբանէ երկրին տազնապալեց ժամանակի բերմանց պատճառաւ յամաքայլ կընթանայ ընկերութիւնը . իւր առաջին վարժարանը կը բանայ 'ի վասպուրական յԱլեք գիւղ , այլ սակայն հուսկ յետոյ նուէրները կ'սկսին տեղալ մոտակայ :

Հայրենեաց սրբազան հոգերէ հեռի , աշխարհի ամեն կողմերը ցիր և ցան ընդ օտար ու տար աստեղօք նժդեհեալ Հայեր՝ ըսելով Արարատեանի հաստատութիւնը սիրելով նորա առաջարկութիւնն ու նպատակը և գովելով նորա խնդրանքն անտի գեղեցած գործն վիճակը , յառնեն օգնութեան ձեռն կարկառել , քաջալեր կարգաւ և Տիկնիսու ու կովկասաբնակ մերայինք կը գերադնայեն քան զամեն 'ի նպատակ Արարատեանի , և այսպէս Տիկնիսու ու Պոլսոյ Հայութեան այս երկու գլխաւոր կեդրոնավայրաց ազգայինք գոյցես իբր մաշնիսիւ կը ձգտին նաև 'ի միմեանս այս ընկերութեան միջոցաւ . և որ մեծն է քայլաբնութեանց , օտարազգի եւրոպացիք իսկ փարսէյն , լատիններն ու չեխներն ընկերութեան համակիր՝ նպատակ մատուց դանուիլ արժան կը դառնան :

Վանայ վարժապետանոցը կը հիմնուի , ինչպէս նաև մի քանի այլ վարժարաններ 'ի չրջակայ գիւղորէս 'ի Գործօթ և 'ի Դատական : Ընկերութիւնը նոր ձեռնարկութեանց կը թեւակոխէ , և կը պատրաստուի իւր աշխատութեանց ասպարէզը հետեւ առաւել ընդարձակել և Հայրենեաց օգտին համար ևս առաւել գօտեպնդիլ :

Չոր պատուական ներկայութիւնն իսկ , հանդիսական Տեառք , մեծապէս կը խրախուսէ այսօր զԱրարատեանս , և նորա մէջ մի անդամք՝ իրենց ուրախութեան և շնորհակալեաց ուղերձը Չեղ մատուցանելու և իրենց զգացմանց թարգման կանգնելու պատիւը տալով ինձ՝ կը յանձնարարեն միանգամայն խնդրել 'ի Ձեզմ , որ շնորհ ընէք շարունակել Ձեր բարձր պաշտօնանութիւնն ընկերութեան առաջադրած նպատակին արդիւնաւոր և անվերջ գործարկութեանը , յոր ուխտեալ են ընկերք ամենայն և յուսով , յենլով միայն 'ի քայլաբնութիւն և յօժանդակութիւն ազգասէր մերոսնէն , յոր բարձր 'ի գլուխ հանդիսանայք :

Ուրիշ քանի մը կարևոր ուղերձներ ալ կարգացուցան , որոց հրատարակութիւնը վաղուան թողլու կը պարտաւորմը :

Վերջապէս Արարատեան ընկերութեան տուած երէկուան կոչումը բոլոր հանդիսականաց վրայ ամենաքաջոր տպաւորութիւն մ'ըրաւ , որ անշնչելի պիտի մնայ անոնց մտայ մէջ :



ԱՇԽԱՐՀԱՅԱՆՈՅ ԱԶԳԱՅԻՆ

ՏՊԱԳՐԱՊԵՏ Ի ՓԱՐՔ , Ի ՄՈՐԱՆԻՍ ԵՒ Ի Կ. ՊՈԼԻՍ

Պ. ՃԱՆԻԿ Ս. ԱՐԱՄԵԱՆ

ԵՒԽՈՄԻԱՅԻ

Յետ եռամեայ տաժանելի հիւանդութեան այս առաւօտ ժամը 12ին իւր մահկանացուն կնքեց ի հասակի 39 ամաց , ի խոր սուգ համակելով իւր Տիկնին ու միակ սրդին , քոյրերն ու եղբայրը և համարէն ազգականքն ու բարեկամները :

Յուզարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղը՝ երեքշաբթի՝ ժամը 4 ին , խաղաղիկ Ս. Ստեփաննոս եկեղեցին , ուսուցիչ մարմինը թաղին գերեզմանատունը պիտի փոխադրի յետ աւարտման Ս. Պատրարգին , որ յատկապէս բարեկիցատակ Հանդուցեղոյն հոգւոյն համար պիտի մատուցուի 'ի ներկայութեան Ս. Պատրարգ Հօր :

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՐ

Ճշմարիտ է թէ երկտասարդ ազգի մը գլխաւոր գործը ինքը կը կազմեն : Այն երկրին մէջ ուր երկտասարդութիւնը կենդանի է , միշտ չարժեւ կայ դէպ 'ի յառաջդիմութիւն : Որովհետեւ երկտասարդը յեղափոխական են , նոցա երեսկայութիւնը համապալ նորա հրապարակ պատկերներով կը առգորի : Նոքա կ'առնեն միակերպութիւնը , և սիրահար են նորութեանց : Երկտասարդը յեղափոխեցին և կը յեղափոխեն աշխարհի քաղաքակրթութիւնը : Եւրոպա և Ամերիկա կը պարծին իւրեանց կիրթ երկտասարդաց բանակներով , որք միշտ կը մաքաւին միակերպութեան դէմ , և կ'աշխատին յեղաշրջել ինչ որ հին է և հակառակ դարձաւ պահանջմանց : Այդ հզօր բանակներ կը տքնին հիւսիսային միասնութեան հիւսիսային հանրապետութեան փոխարինել , և տապալելով Բրուսիոյ լատինական քաղաքագէտին իշխանութիւնը՝ նոր կազմակերպութիւն մը տալ Գերմանական մեծ ազգին : Այսպէս բարձր է երկտասարդութեան կոչումն , և երկրորդ է այն ազգն՝ որոյ երկտասարդը կը ջանան իւրեանց նախաանձմանեալ պաշտօնը կատարել :

Հայ երկտասարդը ընդերկար իւրեանց այս կոչման անտարբեր կենալէ վերջ՝ կարծես յանկարծ գոյադիմեցան : 1879 թուականն ազգային ընդհանուր զարթման զարագումն մը կրնայ համարել : Հայ երկտասարդութիւնն ամենուրեք սկստաւ շարժիլ , և 'ի հրապարակ գալ իրեն պաշտպան ազգային յառաջդիմութեան կարծ ժամանակավիճակ մը մէջ 'ի լոյս եկան զանազան ընկերութիւնք , որք իւրեանց տեսակէտ ունին նոր կենդանութիւն մը տալ Հայ ազգին , և զայն յառաջ վարել քաղաքակրթութեան ասպարիզին մէջ : Արարատեան ընկերութիւնը , Գործըստիւրաց և այլ ազգօգուտ ընկերութեանց գործակցութեամբ կ'աշխատի զառախարակութիւնը տարածել Հայաստանի մէջ , լոյս տալէ հոն՝ ուր դեռ խաւարը կը վեհագետէ , ուր դեռ հին նախապաշարմունք իւրեանց դերը կը խաղան տխուրօրէն :

Մինչև ցարդ Հայաստանի մանկուոյն բարոյական ու մտաւորական մշակութիւնը բարձր թողի եղած էր : Հայ դուռնիւնք , որք իւրեանց վառվառն աչքերով և յուսովից ճակատով փառաւոր ազգայն մը կը խոտանային , իւրեանց մահուութեան և պատանեկութեան թանկագին օրերը փոխանակ վայելելու գործըստն յարկերու մէջ , հովուութեամբ և կոմ 'ի գուր կը վառնէին : Մինչև ցարդ Հայաստանի Հայոց վիճակը միտքնախորթ երեսն ցաւալի տեսարան մը կը ներկայէր : Նոյս կենաց եղանակը , սովորութիւններն ու գաղափարներն ժամանակին փոփոխութիւններէն , այլ իրեն հնուիւնը մարդկային ազգին նախնական վիճակը կը արտահայտէր : Այս ընկերութեանց արդէն ցոյց տուած յաջողութիւնը խիստ քաջալերական է : Նոքա արձագանք դառնըրու և զիւր մաթիւ հայաբնակ քաղաքներու և զիւր շրջաններու մէջ , և եւանդաւորիկն ուղիւն իւրեանց միտքնախորթ մը կը խաղաղէր : Նոքա միջակայն իւրեանց միտքնախորթ մը կը խաղաղէր : Նոքա միջակայն իւրեանց միտքնախորթ մը կը խաղաղէր :

տանի Հայոց վիճակը միտքնախորթ երեսն ցաւալի տեսարան մը կը ներկայէր : Նոյս կենաց եղանակը , սովորութիւններն ու գաղափարներն ժամանակին փոփոխութիւններէն , այլ իրեն հնուիւնը մարդկային ազգին նախնական վիճակը կը արտահայտէր : Այս ընկերութեանց արդէն ցոյց տուած յաջողութիւնը խիստ քաջալերական է : Նոքա արձագանք դառնըրու և զիւր մաթիւ հայաբնակ քաղաքներու և զիւր շրջաններու մէջ , և եւանդաւորիկն ուղիւն իւրեանց միտքնախորթ մը կը խաղաղէր : Նոքա միջակայն իւրեանց միտքնախորթ մը կը խաղաղէր :

Արդարեւ չկայ ձեռնարկութիւն մը , որ այնչափ վաճառ ըլլայ քան ժողովուրդ մը լուսաւորելու գործը : Փրկել բանական էակներ աղիտութեան և նախապաշարմունք քանդել ազգեցութենէն , մեծագործութեանց մեծագոյնն է : Ուստի ա՛մեն ճշմարիտ Հայու պարտաւորութիւնն է մասնակցել այնպիսի ձեռնարկութեանց , որոց նպատակն է Հայաստանի ազգեւոր արդահատելի ժողովրդեան մէջ բարոյական վերակենդանութեան մը գործել : Այս ընկերութեանց արդէն ցոյց տուած յաջողութիւնը խիստ քաջալերական է : Նոքա արձագանք դառնըրու և զիւր մաթիւ հայաբնակ քաղաքներու և զիւր շրջաններու մէջ , և եւանդաւորիկն ուղիւն իւրեանց միտքնախորթ մը կը խաղաղէր : Նոքա միջակայն իւրեանց միտքնախորթ մը կը խաղաղէր :

Այս ազգային ընկերութեանց հաստատութեան պարագայներն արժանի են զիտուութեան : Եւրոպայ իւր պայծառ խոստումներով զմեզ որորեց : Անգղիա , որոյ նշանաբանն եղած է միշտ եւ , կեղծեց հրաք մը գործել խոստանալով օգնել այնպիսի ազգի մը , յորմէ շահ մը չէր անկեղծ : Սակայն Եւրոպայ այս խառնակ աշխարհավարութիւնը անուղիղի բայց մեծամեծ օգուտներ արտադրեց : Հայք մինչև Պէրսի վեհաժողովին լուծումն իւրեանց աչքը դէպ յԵւրոպա դարձուցած էին , և անտի կը յուսային իւրեանց միտքնախորթ մը : Նոքա մինչև ցարդ ապաւինած էին կառավարութեանց կեղծ մարդասիրութեան , բայց այժմ համոզուան են թէ օտարը միշտ օտար է , և իւրաքանչիւր ազգ պարտի իւր վրայ միայն վստահիլ : Այժմ կը հաստատեն թէ ժողովուրդ մը իւր անդամաց աշխատութեամբ միայն կրնայ յառաջանալ , և թէ սպասել որ այլը զինքը շարժեն՝ յայտնի յիմարութիւն է : Այս համոզումն էր որ յազգեց Հայ երկտասարդութիւնն . և ծնունդ տուաւ այսպիսի ազգօգուտ ձեռնարկութեանց : Հայք երեսն ազգ և հայրենիք կը կոչէին , հայրենեաց ազգները կ'ողջային լաղաղին , և կը կարծէին թէ այսպէս կրնան փրկել իւրեանց ազգն : Բայց այժմ համոզուած են թէ ողբն ու լացը միայն օգտին հոռեմընէր յառաջ բերելու կը ծառայեն , և թէ գործը , գործն և եթէ կրնայ իրաւորել իւրեանց փառքները : Հայ երկտասարդութիւնն այս թանկագին դասը շահեցաւ վեհաժողովին , և ուխտեց գործադրել ինչ որ Եւրոպա միայն խոտանցաւ :

Մ'նայեալ հերթաւ Բաւոյ

Կ. Պոլս 16 ապրիլ 1879

• • • Խմբագիր Մամուլ լրագրոյ .

Գործըստիւրաց—Արեւելեան ընկերութեան Տնօրէն խորհուրդօ պարտաւորութիւն կ'դդայ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել այն ամեն նուիրատուութեանց համար որ ամեն կողմէ ընկերութեան կը համայնին :

Վերջին օրերս ստացանք .

Թիֆլիզէն Մեղու—Հայաստանի լրագրոյ պատուարժան խմբագրի բաւցած հանդանակութենէն և յԱզգքանդարօյ Արժանապատիւ Տէր Մինաս քահանայի մատուցած ջանքիւր գոյացեալ 773 լուսլիկ այսինքն Օսմանի 82x80 :

Տրամադրանքն Մեծարդոյ Միլիտէ

Մարտեանի գործակցութեամբ 18 հաւերինոց թուղթ :

Մեծարդոյ Մարկոս Էֆէնտի Աղաբէկէանէ 1 յ12 տարուան Միլի Աւարայրի 20 օրինակ : Հայկական թատր 20 օրինակ :

Մեծարդոյ Յովսէփ Էֆէնտի Գաւաֆեանէ Թուղթ Մարկոսի Աղաբէկէան 10 օրինակ :

Մեծարդոյ Զարմայր Մսերեանէ ('ի Մոսկուա) Հայկական Ձեռքեր (վէպ Անդր) 20 օրինակ :

Մեծարդոյ Մինաս Էֆէնտի Ձեռագէ Գրական Փորձեր 23 օրինակ :

Հաճեցէք Մեծարդոյ Խմբագիր ընդունիլ մեր յարգանաց հաւատարմութիւն :

Ատենապալիր Ստեփանյան Ս. Տառնապետ

Ա. Զ. Դ.

Պարտիզակի երկսեւ վարժարանին համար հայկական դաստաւ մը կուզուի , որ միանգամայն անօրէնի պաշտօն պիտի վարէ :

Յանձն առնուլ ուղղող պէտք է Գեր. Տ. Յ. Միլեան հօր գիւմ Բերալի Ս. Երրորդութիւն եկեղեցին :

Ի. Ա. Ն.

Ֆէսխանէ վէ իրմիտ ֆապրիպայը հիւմայունաբար իշուն շուրուի մուղարբէսիլը միւլայեալ օլունաճաղը եւլիլընէ իլուն գըլընէ եւլիլընէ իճա խալիլէն միւնաքասապնալ պէհէր գըլէսի օն իւլ գըլընա թէնիլ խալիլէր թալիլի էօհաէսին օն գալմիլ վէ նիսանը ըսմիլին օն ալլընը փաղար իրթէսի կիւնիւնէն օն տօղուլունալ բէնճէնիլիս կիւնիւնէ գատար միւնաքասալի ալէնիլէսին իճաղը մուղարբէր պուլունալ շօլմաղլէ թալիլ օլանլարըն եւլիլ մէղքիւրտէ Տօրի Շուրայի ասքերիլէ կէլմէլէրի :

13 նիսան 1878

Պապը Սէրասքերի

Նիզամիլէ Նանը Աղիլ խաղախի տէկիլմէլէրի հասըլթընալն շուրուլթը մուղարբէսիլէ ֆիլուլթը օլունաճաղ ալթը եւլիլ պլին գըլէքէնիլն պէհէր գըլէսի օն փաղայա թալիլի էօհաէսինալ օլուլ նիսանըն օն եւլիլմի ասըլ կիւնիլ թէքթըր պիլ միւլայիլտէ գատարը գալթիսի վէրիլէնէլլիսէն , իլթիլա խալիլէրէլլիս եւլիլ մէղքիլմէլէրիս իլթիլէլլիս տաճալէլլէնէ Տօրի Շուրայի կէլմէլէրի :

12 նիսան 1879

Պապը Սէրասքերի

Նիզամիլէ հալմալ անպարը իլլուն շէրայիլթի մուղարբէսիլէ միւլայեալ օլունաճաղ օլան օթուլ պլին չէքի հալթուլթը միւնաքասալը նիսանը բուլմիլն օն ալլընը բաղար իրթէսի կիւնիլ իճա օլունաճաղընալն , իլթիլ թալիլ օլանլարըն եւլիլ մէղքիւրտէ վէ շէրայիլթիսի անլամալ խալիլէլլէր տաճալէլլէնէ Տօրի Շուրայի ասքերիլէ կէլմէլէրի :

12 նիսան 1879

Պապը Սէրասքերի

Տէրատեւթ վէ թաղա մէքեալ թալիլ ասքերիլէսի շալիլտան իլլուն տօղսան պէլ սէնէլիլտէ իլլուլմի օլան էլալիս միւնալէ օլաղալ շուրուլթը մուղարբէսիլէ իլթար թալիլ էօհաէսինալ օլուլ նիսանըն օն եւլիլմի ասըլ կիւնիլ միւնաքասալը իճա օլունաճաղընալն , իլթիլ թալիլ օլանլարըն եւլիլ մէղքիւրտէ վէ շէրայիլթիսի անլամալ

